

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՉԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ

**ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ
ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
2018**

ՏԱՐԵԿԱՆ ՁԵԿՈՒՅՑ

Երևան 2019

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԶԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ

**ՄԻԱԿ ՎԱՐԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ
ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

2018

ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Բովանդակություն

<u>ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ</u>	
<u>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2018թ.</u>	6
<u>ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում, 2018թ.</u>	6
<u>ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և մահվան դեպքերը՝ ըստ գրանցման տարիների</u>	6
<u>ՄԻԱՎ վարակի դեպքերը՝ ըստ սեռի և տարիքային խմբերի</u>	7
<u>ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերը՝ ըստ փոխանցման ուղիների</u>	8
<u>Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ վարակի համաճարակի բնորոշ</u>	
<u>առանձնահատկությունները վերջին տասը տարիներին</u>	10
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակն Արագածոտնի մարզում.....	16
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակն Արարատի մարզում	16
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակն Արմավիրի մարզում	17
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Գեղարքունիքի մարզում.....	17
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Լոռու մարզում.....	18
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Կոտայքի մարզում	18
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Շիրակի մարզում	19
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Սյունիքի մարզում	19
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Վայոց ձորի մարզում	20
<u>Բնակչության տարբեր խմբերի շրջանում ՄԻԱՎ վարակի տարածվածությունը և</u>	
<u>վարքագծային ցուցանիշները</u>	21
ԹՆՕ-ների շրջանում ՄԻԱՎ վարակի տարածվածությունը և վարքագծային	
ցուցանիշները.....	21
ԿՍԿ-ների շրջանում ՄԻԱՎ վարակի տարածվածությունը և վարքագծային	
ցուցանիշները.....	23
SUS-ների շրջանում ՄԻԱՎ վարակի տարածվածությունը և վարքագծային	
ցուցանիշները.....	25
SԳ-ների շրջանում ՄԻԱՎ վարակի տարածվածությունը և վարքագծային	
ցուցանիշները.....	26
ՀՔաղաքաբնակ արական սեռի սեզոնային աշխատանքային միգրանտների շրջանում	
ՄԻԱՎ վարակի տարածվածությունը և վարքագծային ցուցանիշները	27
<u>ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների և SUS-ների շրջանում 2012, 2014, 2016 և 2018 թվականներին</u>	
<u>կենսաբանական և վարքագծային հիմնական ցուցանիշների փոփոխության</u>	
<u>միտումները</u>	29
Թմրամիջոցների ներարկային օգտագործողներ	29
<u>Կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կանայք</u>	30
Տղամարդու հետ սեռական հարաբերություն ունեցող տղամարդիկ	33
<u>Խմբերի չափերի գնահատում</u>	36
<u>Դիսպանսերային հսկողություն, հակառետրոմիդրոսային բուժում, մորից երեխային</u>	
<u>ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում, նախակոնտակտային և հետկոնտակտային</u>	
<u>կանխարգելում</u>	37
<u>Համակցված վարակներ</u>	38

<u>Օփիոիդային փոխարինող բուժումը Հայաստանում</u>	39
<u>ՄԻԱՎ վարակի բուժման աստիճանաասանդակ (կասկադ), 2018թ.</u>	40
<u>ՄԻԱՎ-ի դեղակայունության հսկողություն</u>	41
<u>Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի բնագավառում 2018 թվականի առաջընթացի վերաբերյալ զեկույցի ցուցանիշներ</u>	43
<u>Մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման վերացման վավերացման ցուցանիշներ</u>	44
<u>ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն</u>	47
 Գծապատկերների ցանկ	
<u>Գծապատկեր 1. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և մահվան դեպքերի բաշխումը՝ ըստ գրանցման տարիների, 2009-2018թթ.</u>	6
<u>Գծապատկեր 2. ՄԻԱՎ վարակի դեպքերի բաշխումը՝ ըստ սեռի և տարիքային խմբերի</u>	7
<u>Գծապատկեր 3. ՄԻԱՎ վարակի դեպքերի բաշխումը՝ ըստ սեռի և գրանցման տարիների, 2009-2018թթ.</u>	8
<u>Գծապատկեր 4. ՄԻԱՎ վարակի դեպքերի բաշխումը՝ ըստ փոխանցման ուղիների, 2009-2018թթ.</u>	9
<u>Գծապատկեր 5. ՄԻԱՎ-ի փոխանցման ուղիները՝ ըստ սեռի, 2009-2018թթ.</u>	10
<u>Գծապատկեր 6. ՄԻԱՎ-ի փոխանցման հիմնական ուղիները, 2009-2018թթ.</u>	11
<u>Գծապատկեր 7. ՄԻԱՎ վարակի արձանագրված դեպքերի բաշխումը՝ ըստ փոխանցման ուղիների և վարակման հավանական վայրերի, 2009-2018թթ. (ՀՀ-ում վարակվածներ)</u>	11
<u>Գծապատկեր 8. ՄԻԱՎ վարակի արձանագրված դեպքերի բաշխումը՝ ըստ փոխանցման ուղիների և վարակման հավանական վայրերի, 2009-2018թթ. (արտերկրում վարակվածներ)</u>	12
<u>Գծապատկեր 9. Վարակման հավանական վայրերը՝ ըստ տարիների, 2009-2018թթ.</u> ...	12
<u>Գծապատկեր 10. Միգրացիոն գործոնի դերը 2014-2018թթ. արձանագրված դեպքերի կազմում (մեծահասակներ)</u>	13
<u>Գծապատկեր 11. ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի բաշխումը՝ ըստ բնակչության խմբերի, 2009-2018թթ. ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերը՝ ըստ Հայաստանի մարզերի</u>	14
<u>Գծապատկեր 12. ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի բաշխումը՝ ըստ ՀՀ մարզերի</u>	15
<u>Գծապատկեր 13. ՄԻԱՎ վարակի տարածվածությունը մեծահասակների շրջանում Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում և Հայաստանի Հանրապետությունում, 2017թ.</u>	21
<u>Գծապատկեր 14. ԹՆՕ-ների շրջանում վարրագծային հետազոտությունների արդյունքները, 2018թ.</u>	23
<u>Գծապատկեր 15. ԿՍԿ-ների շրջանում վարրագծային հետազոտությունների արդյունքները, 2018թ.</u>	24
<u>Գծապատկեր 16. ՏՍՏ-ների շրջանում վարրագծային հետազոտությունների արդյունքները, 2018թ.</u>	26
<u>Գծապատկեր 17. ՏԳ-ների շրջանում վարրագծային հետազոտությունների արդյունքները, 2018թ.</u>	27

Գծապատկեր 18.	<i>ՄԻԱՎ վարակի բուժման աստիճանասանդղակ, 2018թ.</i>	40
Գծապատկեր 19.	<i>ՄԻԱՎ-ի վերաբերյալ լաբորատոր հետազոտություններ բժշկական կազմակերպություններում.</i>	47
 Աղյուսակների ցանկ		
Աղյուսակ 1.	<i>ՄԻԱՎ-ով վարակված տղամարդկանց և կանանց բաշխումը՝ ըստ փոխանցման ուղիների.</i>	9
Աղյուսակ 2.	<i>Երեխաների շրջանում ՄԻԱՎ-ի փոխանցման ուղիները.</i>	10
Աղյուսակ 3.	<i>ՄԻԱՎ-ի, սիֆիլիսի և հեպատիտ Զ-ի տարածվածությունը ԹՆՕ-ների շրջանում, 2018թ.</i>	22
Աղյուսակ 4.	<i>ՄԻԱՎ-ի, գոնորեայի, տրիխոմոնիազի, քլամիդիոզի և սիֆիլիսի տարածվածությունը, 2018թ.</i>	24
Աղյուսակ 5.	<i>ՄԻԱՎ վարակի, սիֆիլիսի և հեպատիտ Բ-ի տարածվածությունը.</i>	25
Աղյուսակ 6.	<i>ՄԻԱՎ վարակի, սիֆիլիսի և հեպատիտ Բ-ի տարածվածությունը.</i>	26
Աղյուսակ 7.	<i>ՄԻԱՎ-ի, հեպատիտ Բ-ի, հեպատիտ Զ-ի և սիֆիլիսի տարածվածությունը, 2018թ.</i>	28
Աղյուսակ 8.	<i>Քաղաքային միգրանտների սեռական կյանքի բնութագրիչներ, 2018թ.</i>	28
Աղյուսակ 9.	<i>ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների և ՏՍՏ-ների շրջանում միասնական տվյալներ, 2018թ.</i>	36
Աղյուսակ 10.	<i>CD4+ լիմֆոցիտների քանակը ՄԻԱՎ վարակի ախտորոշման պահին, 2014-2018թթ.</i>	37
Աղյուսակ 11.	<i>Տուբերկուլոզ/ՄԻԱՎ համակցված վարակ, 2014-2018թթ.</i>	38
Աղյուսակ 12.	<i>Վիրուսային հեպատիտ Զ/ՄԻԱՎ և վիրուսային հեպատիտ Բ/ՄԻԱՎ համակցված վարակներ, 2014-2018թթ.</i>	38
Աղյուսակ 13.	<i>Օփիոիդային փոխարինող բուժումը Հայաստանում, 2014-2018թթ.</i>	39
Աղյուսակ 14.	<i>ՀՌՎ դեղերի նկատմամբ ՄԻԱՎ-ի կայունության վաղ կանխման ցուցանիշներ (ՎԿՑ) .</i>	41
Աղյուսակ 15.	<i>ՀՌՎ դեղերի նկատմամբ ՄԻԱՎ-ի կայունության վաղ կանխման ցուցանիշները մեծահասակների շրջանում, 2018թ.</i>	42
Աղյուսակ 16.	<i>ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի գլոբալ մոնիտորինգի ցուցանիշներ, 2018թ.</i>	43
Աղյուսակ 17.	<i>ՄԻԱՎ-ի ՄԵՓՎ-ի վավերացման ցուցանիշներ, 2014-2018թթ.</i>	44
Աղյուսակ 18.	<i>ՄԵՄՓԿ կասկադի ցուցանիշներ (ծրագրային տվյալներ, հաշվետվական ձևեր), 2013-2018թթ.</i>	46
Աղյուսակ 19.	<i>ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունները՝ ըստ լաբորատորիաների, 2018թ.</i>	48
Աղյուսակ 20.	<i>ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների և հետազոտված հոդիների թիվը՝ ըստ մարզերի, 2018թ.</i>	50
Աղյուսակ 21.	<i>ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունները՝ ըստ բնակչության խմբերի և սեռի, 2018թ.</i>	51
Աղյուսակ 22.	<i>ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտված ՀՀ քաղաքացիների բաշխումը՝ ըստ տարիքի, սեռի և բնակչության վայրի, 2018թ.</i>	54

<u>Աղյուսակ 23.</u>	<u>ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդարարվության, հետազոտության տեսակը և ուղեգրումը, 2014-2018թթ.....</u>	55
<u>Աղյուսակ 24.</u>	<u>Հղիների շրջանում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների և արձանագրված ՄԻԱՎ վարակի դեպքերի դինամիկան, 2014-2018թթ.....</u>	56
<u>Աղյուսակ 25.</u>	<u>Միգրանտների շրջանում իրականացվող ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերի շրջանակում արագ թեստավորման մեթոդով կատարված հետազոտությունները, 2018թ.....</u>	57

ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2018Թ.

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում, 2018թ.

Հայաստանի Հանրապետությունում մարդու իմունային անբավարարության վիրուսով վարակվածության դեպքերի արձանագրումը սկսվել է 1988 թվականից: Մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը ՀՀ քաղաքացիների շրջանում գրանցվել է ՄԻԱՎ վարակի 3337 դեպք, որից 58-ը՝ երեխաների շրջանում:


ՄԻԱՎ վարակ ունեցողներից 1695-ի մոտ ախտորոշվել է ՁԻԱՀ, որից 33-ը երեխաների շրջանում: Գրանցվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պացիենտների մահվան 779 դեպք: Մահացածների թվում կա 11 երեխա:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակի գնահատումը վկայում է, որ հանրապետությունում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց հաշվարկային թիվը կազմում է 3500:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և մահվան դեպքերը՝ ըստ գրանցման տարիների

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և մահվան դեպքերի բաշխումը վերջին 10 տարիների ընթացքում ըստ գրանցման տարիների ներկայացված է գծապատկեր 1-ում:


Գծապատկեր 1. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և մահվան դեպքերի բաշխումը՝ ըստ գրանցման տարիների, 2009-2018թթ.



ՄԻԱՎ վարակի դեպքերը՝ ըստ սեռի և տարիքային խմբերի

ՄԻԱՎ-ով վարակվածների կեսից ավելին՝ 51%-ը ախտորոշման պահին եղել է 25-39 տարիքային խմբում, այսինքն՝ ակտիվ վերարտադրողական տարիքում: ՄԻԱՎ վարակի դեպքերի բաշխումը՝ ըստ սեռի և տարիքային խմբերի, ներկայացված է գծապատկեր 2-ում:


Գծապատկեր 2. ՄԻԱՎ վարակի դեպքերի բաշխումը՝ ըստ սեռի և տարիքային խմբերի



ՄԻԱՎ վարակի արձանագրված դեպքերի ընդհանուր կազմում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները՝ 2313 մարդ (69%), իգական սեռի ներկայացուցիչների մոտ արձանագրվել է վարակի 1024 դեպք (31%):

Վերջին 10 տարիներին արձանագրված դեպքերի մեջ սեռերի հարաբերակցությունը գրեթե չի փոխվել: ՄԻԱՎ վարակի դեպքերի բաշխումը՝ ըստ սեռի վերջին 10 տարիների ընթացքում ներկայացված է գծապատկեր 3-ում:

Գծապատկեր 3. ՄԻԱՎ վարակի դեպքերի բաշխումը՝ ըստ սեռի և գրանցման տարիների, 2009-2018թթ.




ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերը՝ ըստ փոխանցման ուղիների

ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի վերլուծությունը՝ ըստ փոխանցման ուղիների, ցույց է տալիս, որ ՀՀ-ում ՄԻԱՎ վարակի փոխանցման հիմնական ուղիներն են հետերոսեքսուալ ճանապարհը (71%) և թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով վարակումը (21%): Սրանցից բացի, արձանագրվել են հոմոսեքսուալ ճանապարհով (4%), մորից երեխային (1,5%) և արյան միջոցով (0,1%) ՄԻԱՎ վարակի փոխանցման դեպքեր:

Վերջին 10 տարիներին հետերոսեքսուալ ճանապարհը կազմել է 76,5%, թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով վարակումը 15%, հոմոսեքսուալ ճանապարհը 4,7%, մորից երեխային փոխանցումը 1,5% և արյան միջոցով փոխանցումը 0,1% (գծապատկեր 4):

Գծապատկեր 4. ՄԻԱՎ վարակի դեպքերի բաշխումը՝ ըստ փոխանցման ուղիների, 2009-2018թթ.




Հետերոսեքսուալ ճանապարհով ՄԻԱՎ-ի փոխանցումը վարակման հիմնական ուղին է թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց շրջանում (աղյուսակ 1): ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի վերլուծությունը՝ ըստ փոխանցման ուղիների և սեռի, ցույց է տալիս, որ տղամարդկանց կեսից ավելին (60%) վարակվել է հետերոսեքսուալ ճանապարհով, իսկ 30%-ը՝ թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով: Գրեթե բոլոր կանայք վարակվել են սեռական ճանապարհով (99,1%):

Աղյուսակ 1. ՄԻԱՎ-ով վարակված տղամարդկանց և կանանց բաշխումը՝ ըստ փոխանցման ուղիների

Սեռ	Փոխանցման ուղի										Ընդամենը	
	Թմրամիջոցների ներարկային օգտագործում		Հետերոսեքսուալ հարաբերություններ		Հոմոսեքսուալ հարաբերություններ		Արյուն		Անհայտ			
	Բաց. թիվ	%	Բաց. թիվ	%	Բաց. թիվ	%	Բաց. թիվ	%	Բաց. թիվ	%	Բաց. թիվ	%
Ար	691	30,3	1383	60,6	137	6,0	-	-	71	3,1	2282	100
Իգ	4	0,4	988	99,1	-	-	1	0,1	4	0,4	997	100

Վերջին 10 տարիներին ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի վերլուծությունը՝ ըստ փոխանցման ուղիների և սեռի, ցույց է տալիս, որ տղամարդկանց 67,7%-ը վարակվել է հետերոսեքսուալ ճանապարհով, իսկ 22,3%-ը՝ թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով (գծապատկեր 5): Գրեթե բոլոր կանայք վարակվել են սեռական ճանապարհով (99,2%):

Պճապատկեր 5. ՄԻԱՎ-ի փոխանցման ուղիները՝ ըստ սեռի, 2009-2018թթ.



Գրեթե բոլոր երեխաները վարակվել են իրենց ՄԻԱՎ վարակ ունեցող մայրերից (աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Երեխաների շրջանում ՄԻԱՎ-ի փոխանցման ուղիները

Մորից երեխային		Արյան միջոցով		Անհայտ		Ընդամենը	
Բաց. թիվ	%	Բաց. թիվ	%	Բաց. թիվ	%	Բաց. թիվ	%
51	87,9	3	5,2	4	6,9	58	100


Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ վարակի համաճարակի բնորոշ առանձնահատկությունները վերջին տասը տարիներին

Վերջին 10 տարիներին ՀՀ-ում ՄԻԱՎ վարակի համաճարակի առանձնահատկություններն են՝

- Վարակի փոխանցման հիմնական ուղին հետերոսեքսուալ ճանապարհն է **(2009-2018թթ.՝ 76,5%)**:
- Զգալի է աշխատանքային միգրացիայի գործոնի ազդեցությունը: 2009-2018թթ. ՄԻԱՎ վարակ ախտորոշում ստացածների 56%-ը, լինելով աշխատանքային միգրանտ, ոչ անվտանգ վարքագիծ է դրսևորել արտերկրում, և ամենայն հավանականությամբ այնտեղ էլ վարակվել է: Ընդհանուր առմամբ ՄԻԱՎ վարակի դեպքերի 66%-ն արձանագրվել է աշխատանքային միգրանտների և նրանց զուգընկերների շրջանում:
- Արձանագրվող դեպքերի ընդհանուր կազմում թմրամիջոցների ներարկային օգտագործողների (ԹՆՕ), կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կանանց (ԿՍԿ), հոմոսեքսուալ կապեր ունեցող տղամարդկանց (SUS) մասնաբաժինը մնում է կայուն ցածր **(2009-2018թթ.՝ 20,8%)**:


Վերջին 10 տարիներին արձանագրված դեպքերի մեջ կայուն բարձր է հետերոսեքսուալ ճանապարհով վարակման դեպքերի մասնաբաժինը (գծապատկեր 6):

Գծապատկեր 6. ՄԻԱՎ-ի փոխանցման հիմնական ուղիները, 2009-2018թթ.




Հետերոսեքսուալ ճանապարհով վարակման դեպքերը գերակշռող են թե՛ ՀՀ-ում, թե՛ արտերկրում վարակվածների շրջանում (գծապատկեր 7, 8):

Գծապատկեր 7. ՄԻԱՎ վարակի արձանագրված դեպքերի բաշխումը՝ ըստ փոխանցման ուղիների և վարակման հավանական վայրերի, 2009-2018թթ. (ՀՀ-ում վարակվածներ)




Գծապատկեր 8. ՄԻԱՎ վարակի արձանագրված դեպքերի բաշխումը՝ ըստ փոխանցման ուղիների և վարակման հավանական վայրերի, 2009-2018թթ. (արտերկրում վարակվածներ)




Վերջին 10 տարիներին շարունակում է զգալի մնալ միգրացիայի գործոնի ազդեցությունը երկրում արձանագրվող դեպքերի ընդհանուր թվի վրա (գծապատկեր 9): Այսպես, 2009-2018թթ. ընթացքում արձանագրված ՄԻԱՎ վարակով պացիենտների կեսից ավելին, հավանաբար վարակվել է արտերկրում, որոնցից մոտ 91%-ը՝ ՌԴ-ում (ՌԴ - 90,9%, Ուկրաինա - 4,6%, Վրաստան - 0,8%, Ղազախստան - 0,6%, Ուզբեկստան - 0,6%, այլ երկրներ - 2,5%):

Գծապատկեր 9. Վարակման հավանական վայրերը՝ ըստ տարիների, 2009-2018թթ.




Ընդհանուր առմամբ 2014-2018թթ. արձանագրված դեպքերի մեծամասնությունը՝ 56%-ը, կազմում են արտերկրում վարակվածները, 10%-ը՝ նրանց զուգընկերները (գծապատկեր 10): Այսպիսով, արձանագրված դեպքերի 66%-ը կապված է միգրացիայի հետ:

Գծապատկեր 10. Միգրացիոն գործոնի դերը 2014-2018թթ. արձանագրված դեպքերի կազմում (մեծահասակներ)



Վերջին 10 տարիներին արձանագրվող դեպքերի ընդհանուր կազմում, այսպես կոչված, «դասական ռիսկի խմբերի», այսինքն՝ թմրամիջոցների ներարկային օգտագործողների, կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կանանց և հոմոսեքսուալ կապեր ունեցող տղամարդկանց համամասնությունը շարունակում է մնալ ցածր (20,8%) (գծապատկեր 11): Մեծամասնությունը՝ 76,9%-ը, կազմում են միգրանտները և նրանց զուգընկերները, վերոնշյալ խմբերին պատկանողների զուգընկերները, ոչ անվտանգ սեռական վարքագիծ դրսևորողները:

Գծապատկեր 11. ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի բաշխումը՝ ըստ բնակչության խմբերի, 2009-2018թթ.



ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերը՝ ըստ Հայաստանի մարզերի

ՄԻԱՎ վարակի դեպքերի առավելագույն թիվն արձանագրվել է Երևանի բնակիչների շրջանում՝ 1026 դեպք, որը կազմում է բոլոր գրանցված դեպքերի մոտ 1/3-ը (գծապատկեր 12): ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի թվով երկրորդ տեղում Շիրակի մարզն է՝ 380 դեպք, ինչը կազմում է բոլոր գրանցված դեպքերի 11,4%-ը:

Գծապատկեր 12. ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի բաշխումը՝ ըստ ՀՀ մարզերի



ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակն Արագածոտնի մարզում

Արագածոտնի մարզի բնակիչների շրջանում 1988թ. մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը գրանցվել է ՄԻԱՎ վարակի 132 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտների ընդհանուր կազմում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները՝ 90 մարդ (68%), իգական սեռի ներկայացուցիչների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 42 դեպք (32%): Երեխաների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 2 դեպք:

ՄԻԱՎ-ով վարակվածների 46%-ը 25-39 տարիքային խմբում է:

ՄԻԱՎ վարակով պացիենտների 78%-ը վարակվել է հետերոսեքսուալ ճանապարհով, 14,4%-ը՝ թմրամիջոցների ներարկային գործածման միջոցով: Սրանցից բացի արձանագրվել է հոմոսեքսուալ ճանապարհով ՄԻԱՎ վարակի փոխանցման 5 և մորից երեխային ՄԻԱՎ վարակի փոխանցման 1 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 73-ի մոտ (կին՝ 15, երեխա՝ 2) ախտորոշվել է ՁԻԱՀ, գրանցվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պացիենտների մահվան 27 դեպք: Մահացածների թվում կա 2 կին:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 100-ը (կին՝ 39, երեխա՝ 2) գտնվում են դիսպանսերային հսկողության մեջ ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում: Նրանցից 81-ը ստանում են ՀՌՎ բուժում:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակն Արարատի մարզում

Արարատի մարզի բնակիչների շրջանում 1988թ. մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը գրանցվել է ՄԻԱՎ վարակի 275 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտների ընդհանուր կազմում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները՝ 188 մարդ (68%), իգական սեռի ներկայացուցիչների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 87 դեպք (32%): Երեխաների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 6 դեպք:

ՄԻԱՎ-ով վարակվածների 47,6%-ը 25-39 տարիքային խմբում է:

ՄԻԱՎ վարակով պացիենտների 73,8%-ը վարակվել է հետերոսեքսուալ ճանապարհով, 17,8%-ը՝ թմրամիջոցների ներարկային գործածման միջոցով: Սրանցից բացի արձանագրվել են մորից երեխային ՄԻԱՎ վարակի փոխանցման 6 և հոմոսեքսուալ ճանապարհով ՄԻԱՎ վարակի փոխանցման 12 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 139-ի մոտ (կին՝ 38, երեխա՝ 3) ախտորոշվել է ՁԻԱՀ, գրանցվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պացիենտների մահվան 66 դեպք: Մահացածների թվում կան 13 կին և 4 երեխա:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 192-ը (կին՝ 66, երեխա՝ 2) գտնվում են դիսպանսերային հսկողության մեջ ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում: Նրանցից 151-ը ստանում են ՀՌՎ բուժում:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակն Արմավիրի մարզում

Արմավիրի մարզի բնակիչների շրջանում 1988թ. մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը գրանցվել է ՄԻԱՎ վարակի 286 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտների ընդհանուր կազմում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները՝ 194 մարդ (68%), իգական սեռի ներկայացուցիչների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 92 դեպք (32%): Երեխաների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 5 դեպք:

ՄԻԱՎ-ով վարակվածների մոտ 51%-ը 25-39 տարիքային խմբում է:

ՄԻԱՎ վարակով պացիենտների 72,4%-ը վարակվել է հետերոսեքսուալ ճանապարհով, 19,2%-ը՝ թմրամիջոցների ներարկային գործածման միջոցով: Սրանցից բացի արձանագրվել են մորից երեխային ՄԻԱՎ վարակի փոխանցման 4, հոմոսեքսուալ ճանապարհով փոխանցման՝ 13 և արյան միջոցով փոխանցման՝ 1 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 159-ի մոտ (կին՝ 36, երեխա՝ 4) ախտորոշվել է ՁԻԱՀ, գրանցվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պացիենտների մահվան 58 դեպք: Մահացածների թվում կան 10 կին և 1 երեխա:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 212-ը (կին՝ 76, երեխա՝ 4) գտնվում են դիսպանսերային հսկողության մեջ ՁԻԱՀ-ի ԿԿԿ-ում: Նրանցից 167-ը ստանում են ՀՌՎ բուժում:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Գեղարքունիքի մարզում

Գեղարքունիքի մարզի բնակիչների շրջանում 1988թ. մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը գրանցվել է ՄԻԱՎ վարակի 261 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտների ընդհանուր կազմում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները՝ 180 մարդ (69%), իգական սեռի ներկայացուցիչների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 81 դեպք (31%): Երեխաների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 3 դեպք:

ՄԻԱՎ-ով վարակվածների ավելիքան 56%-ը 25-39 տարիքային խմբում է:

ՄԻԱՎ վարակով պացիենտների 89,3%-ը վարակվել է հետերոսեքսուալ ճանապարհով, 7,7%-ը՝ թմրամիջոցների ներարկային գործածման միջոցով: Սրանցից բացի արձանագրվել են մորից երեխային ՄԻԱՎ վարակի փոխանցման 2, հոմոսեքսուալ ճանապարհով փոխանցման 2 և արյան միջոցով փոխանցման 1 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 100-ի մոտ (կին՝ 23, երեխա՝ 2) ախտորոշվել է ՁԻԱՀ, գրանցվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պացիենտների մահվան 40 դեպք: Մահացածների թվում կա 8 կին:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 201-ը (կին՝ 67, երեխա՝ 3) գտնվում են դիսպանսերային հսկողության մեջ ՁԻԱՀ-ի ԿԿԿ-ում: Նրանցից 159-ը ստանում են ՀՌՎ բուժում:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Լոռու մարզում

Լոռու մարզի բնակիչների շրջանում 1988թ. մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը գրանցվել է ՄԻԱՎ վարակի 328 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտների ընդհանուր կազմում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները՝ 223 մարդ (68%), իգական սեռի ներկայացուցիչների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 105 դեպք (32%): Երեխաների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 10 դեպք:

ՄԻԱՎ-ով վարակվածների մոտ 55%-ը 25-39 տարիքային խմբում է:

ՄԻԱՎ վարակով պացիենտների 70,4%-ը վարակվել է հետերոսեքսուալ ճանապարհով, 18,9%-ը՝ թմրամիջոցների ներարկային գործածման միջոցով: Սրանցից բացի արձանագրվել են մորից երեխային ՄԻԱՎ վարակի փոխանցման 9 և հոմոսեքսուալ ճանապարհով փոխանցման 15 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 161-ի մոտ (կին՝ 39, երեխա՝ 5) ախտորոշվել է ՁԻԱՀ, գրանցվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պացիենտների մահվան 84 դեպք: Մահացածների թվում կան 16 կին և 2 երեխա:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 227-ը (կին՝ 80, երեխա՝ 7) գտնվում են դիսպանսերային հսկողության մեջ ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում: Նրանցից 177-ը ստանում են ՀՌՎ բուժում:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Կոտայքի մարզում

Կոտայքի մարզի բնակիչների շրջանում 1988թ. մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը գրանցվել է ՄԻԱՎ վարակի 257 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտների ընդհանուր կազմում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները՝ 183 մարդ (71%), իգական սեռի ներկայացուցիչների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 74 դեպք (29%): Երեխաների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 4 դեպք:

ՄԻԱՎ-ով վարակվածների ավելիքան 49%-ը 25-39 տարիքային խմբում է:

ՄԻԱՎ վարակով պացիենտների 76,3%-ը վարակվել է հետերոսեքսուալ ճանապարհով, 14%-ը՝ թմրամիջոցների ներարկային գործածման միջոցով: Սրանցից բացի արձանագրվել են մորից երեխային ՄԻԱՎ վարակի փոխանցման 3 և հոմոսեքսուալ ճանապարհով փոխանցման 16 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 141-ի մոտ (կին՝ 32, երեխա՝ 3) ախտորոշվել է ՁԻԱՀ, գրանցվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պացիենտների մահվան 56 դեպք: Մահացածների թվում կա 13 կին:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 192-ը (կին՝ 59, երեխա՝ 4) գտնվում են դիսպանսերային հսկողության մեջ ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում: Նրանցից 158-ը ստանում են ՀՌՎ բուժում:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Շիրակի մարզում

Շիրակի մարզի բնակիչների շրջանում 1988թ. մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը գրանցվել է ՄԻԱՎ վարակի 380 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտների ընդհանուր կազմում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները՝ 269 մարդ (71%), իգական սեռի ներկայացուցիչների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 111 դեպք (29%): Երեխաների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 3 դեպք:

ՄԻԱՎ-ով վարակվածների մոտ 52%-ը 25-39 տարիքային խմբում է:

ՄԻԱՎ վարակով պացիենտների 69,7%-ը վարակվել է հետերոսեքսուալ ճանապարհով, 24%-ը՝ թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով: Սրանցից բացի արձանագրվել են մորից երեխային ՄԻԱՎ վարակի փոխանցման 3, հոմոսեքսուալ ճանապարհով փոխանցման 16 և արյան միջոցով վարակման 1 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 185-ի մոտ (կին՝ 48, երեխա՝ 2) ախտորոշվել է ՁԻԱՀ, գրանցվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պացիենտների մահվան 82 դեպք: Մահացածների թվում կա 8 կին:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 272-ը (կին՝ 93, երեխա՝ 3) գտնվում են դիսպանսերային հսկողության մեջ ՁԻԱՀ-ի ԿԿԿ-ում: Նրանցից 207-ը ստանում են ՀՌՎ բուժում:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Սյունիքի մարզում

Սյունիքի մարզի բնակիչների շրջանում 1988թ. մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը գրանցվել է ՄԻԱՎ վարակի 138 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտների ընդհանուր կազմում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները՝ 92 մարդ (67%), իգական սեռի ներկայացուցիչների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 46 դեպք (33%): Երեխաների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 3 դեպք:

ՄԻԱՎ-ով վարակվածների 53%-ը 25-39 տարիքային խմբում է:

ՄԻԱՎ վարակով պացիենտների 73,2%-ը վարակվել է հետերոսեքսուալ ճանապարհով, 24%-ը՝ թմրամիջոցների ներարկային գործածման միջոցով: Սրանցից բացի արձանագրվել է մորից երեխային ՄԻԱՎ վարակի փոխանցման 3 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 72-ի մոտ (կին՝ 15, երեխա՝ 1) ախտորոշվել է ՁԻԱՀ, գրանցվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պացիենտների մահվան 30 դեպք: Մահացածների թվում կա 11 կին:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 101-ը (կին՝ 33, երեխա՝ 3) գտնվում են դիսպանսերային հսկողության մեջ ՁԻԱՀ-ի ԿԿԿ-ում: Նրանցից 74-ը ստանում են ՀՌՎ բուժում:

ՄԻԱՎ /ՁԻԱՀ-ի իրավիճակը Տավուշի մարզում

Տավուշի մարզի բնակիչների շրջանում 1988թ. մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը գրանցվել է ՄԻԱՎ վարակի 85 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտների ընդհանուր կազմում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները՝ 58 մարդ (68%), իգական սեռի ներկայացուցիչների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 27 դեպք (32%): Երեխաների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 1 դեպք:

ՄԻԱՎ-ով վարակվածների 51%-ը 25-39 տարիքային խմբում է:

ՄԻԱՎ վարակով պացիենտների 78,8%-ը վարակվել է հետերոսեքսուալ ճանապարհով, 12%-ը՝ թմրամիջոցների ներարկային գործածման միջոցով: Սրանցից բացի արձանագրվել են մորից երեխային ՄԻԱՎ վարակի փոխանցման 1 և հոմոսեքսուալ ճանապարհով փոխանցման 4 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 43-ի մոտ (կին՝10) ախտորոշվել է ՁԻԱՀ, գրանցվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պացիենտների մահվան 16 դեպք: Մահացածների թվում կա 3 կին:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 65-ը (կին՝ 23, երեխա՝ 1) գտնվում են դիսպանսերային հսկողության մեջ ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում: Նրանցից 56-ը ստանում են ՀՌՎ բուժում:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Վայոց ձորի մարզում

Վայոց ձորի բնակիչների շրջանում 1988թ. մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը գրանցվել է ՄԻԱՎ վարակի 42 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտների ընդհանուր կազմում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները՝ 28 մարդ (67%), իգական սեռի ներկայացուցիչների շրջանում արձանագրվել է վարակի 14 դեպք (33%): Երեխաների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 2 դեպք:

ՄԻԱՎ-ով վարակվածների մոտ 40,5%-ը 25-39 տարիքային խմբում է:

ՄԻԱՎ վարակով պացիենտների 78,6%-ը վարակվել է հետերոսեքսուալ ճանապարհով, 12%-ը՝ թմրամիջոցների ներարկային գործածման միջոցով: Սրանցից բացի, արձանագրվել են հոմոսեքսուալ ճանապարհով ՄԻԱՎ վարակի փոխանցման 2 և մորից երեխային ՄԻԱՎ վարակի փոխանցման 2 դեպք:


ՄԻԱՎ վարակով պացիենտներից 25-ի մոտ (կին՝ 6, երեխա՝ 2) ախտորոշվել է ՁԻԱՀ, գրանցվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պացիենտների մահվան 13 դեպք: Մահացածների թվում կան 1 կին և 2 երեխա:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 28-ը (կին՝ 11) գտնվում են դիսպանսերային հսկողության մեջ ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում: Նրանցից 23-ը ստանում են ՀՌՎ բուժում:

Բնակչության տարբեր խմբերի շրջանում ՄԻԱՎ վարակի տարածվածությունը և վարքագծային ցուցանիշները

Եթե մեծահասակ բնակչության՝ 15-49 տարեկանների շրջանում ՄԻԱՎ վարակի տարածվածությունը Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում կազմում է 0,9%, Ուկրաինայում՝ 0,9%, Մոլդովայում՝ 0,6%, Վրաստանում՝ 0,5%, Տաջիկստանում՝ 0,3%, ապա Հայաստանում այդ ցուցանիշը համեմատաբար ցածր է և կազմում է 0,2%, այսինքն՝ 4,5 անգամ ցածր է տարածաշրջանային միջին ցուցանիշից (գծապատկեր 13):

Գծապատկեր 13. ՄԻԱՎ վարակի տարածվածությունը մեծահասակների շրջանում Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում և Հայաստանի Հանրապետությունում, 2017թ.



**ԹՆՕ-ների շրջանում ՄԻԱՎ վարակի տարածվածությունը
և վարքագծային ցուցանիշները**


ԹՆՕ-ների շրջանում 2018թ. անցկացված ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտությունների արդյունքները ցույց են տվել, որ Երևանի ԹՆՕ-ների շրջանում ՄԻԱՎ վարակի տարածվածությունը կազմել է 2%, Գյումրիում՝ 0,5%, Վանաձորում՝ 0,4%: Հեպատիտ Ց-ի տարածվածությունն ամենաբարձրն էր Վանաձորի ԹՆՕ-ների (80%) և ամենացածրը Գյումրիի ԹՆՕ-ների շրջանում (8%): Երևանում այն կազմել է 67%: Գյումրիում և Վանաձորում սիֆիլիսի նկատմամբ դրական դեպքեր հետազոտության արդյունքում չեն արձանագրվել, իսկ Երևանում տարածվածությունը կազմել է 2% (աղյուսակ 3):

Աղյուսակ 3. ՄԻԱՎ-ի, սիֆիլիսի և հեպատիտ Ց-ի տարածվածությունը ԹՆՕ-ների շրջանում, 2018թ.

	ԵՐԵՎԱՆ N = 300		ԳՅՈՒՄՐԻ N = 150		ՎԱՆԱՁՈՐ N = 150	
	N	% (95% ՎՄ)	N	% (95% ՎՄ)	N	% (95% ՎՄ)
ՄԻԱՎ ՎԱՐԱԿ						
	5	2,2 (0,2-4,1)	1	0,5 (0,0-1,0)	1	0,4 (0,1-0,8)
ՍԻՖԻԼԻՍ						
	10	2,5 (0,8-4,1)	0	--	0	--
ՀԵՊԱՏԻՏ Ց						
	188	66,7 (60,1-73,3)	14	7,9 (5,1-10,6)	120	80,3 (75,0-5,6)

ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների մակարդակն ամենաբարձրն է եղել Գյումրիում՝ մոտ 96%, Երևանում կազմել է ընդամենը 40% և Վանաձորում՝ 91%: Կեսից ավելին սեռական հարաբերություններ է ունեցել վերջին ամսվա ընթացքում, որոնցից սեռական վերջին հարաբերության ժամանակ պահպանակ է օգտագործել Երևանի ԹՆՕ-ների 41%-ը, Գյումրիի ԹՆՕ-ների 72%-ը և Վանաձորի ԹՆՕ-ների ընդամենը 29%-ը: Բոլոր երեք քաղաքներում բարձր է եղել մանրէազերծ ներարկման պարագաների օգտագործման ցուցանիշը (գծապատկեր 14)

Գծապատկեր 14. ԹՆՕ-ների շրջանում վարքագծային հետազոտությունների արդյունքները, 2018թ.



ԿՍԿ-ների շրջանում ՄԻԱՎ վարակի տարածվածությունը և վարքագծային ցուցանիշները


ԿՍԿ-ների շրջանում 2018թ. անցկացված ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտությունների արդյունքները ցույց են տվել, որ ՄԻԱՎ վարակի տարածվածությունը ցածր էր Երևանում (0,6%), իսկ Վանաձորում և Գյումրիում հետազոտության ընթացքում որևէ դեպք չի արձանագրվել (աղյուսակ 4): Գոնորեայի տարածվածությունը կազմել է Երևանում 5%, Գյումրիում՝ 6%, իսկ Վանաձորում՝ մոտ 3%: Տրիխոմոնիազի տարածվածությունը կազմել է Երևանում՝ 21%, Գյումրիում՝ 15%, Վանաձորում՝ 25%: Քլամիդիոզի ամենաբարձր տարածվածությունը եղել է Գյումրիի ԿՍԿ-ների շրջանում՝ 14%, իսկ Երևանում և Վանաձորում կազմել է համապատասխանաբար 6% և 8%: Սիֆիլիսի տարածվածությունը Երևանում կազմել է 16%, Գյումրիում՝ 5%, իսկ Վանաձորում՝ 4%:

Աղյուսակ 4. ՄԻԱՎ-ի, գոնորեայի, սրիխտմոնիազի, քլամիդիոզի և սիֆիլիսի տարածվածությունը, 2018թ.

	Երևան N = 300		Գյումրի N = 150		Վանաձոր N = 150	
	N	%, (95% ՎՄ)	N	%, (95% ՎՄ)	N	%, (95% ՎՄ)
ՄԻԱՎ						
	3	0,6 (0,0-1,3)	0	--	0	--
Գոնորեա						
	19	5,3 (2,4-8,3)	9	6,3 (3,1-9,6)	4	2,9 (0,5-5,3)
Տրիխտմոնիազ						
	69	21,3 (15,6-27,0)	24	14,8 (10,4-19,0)	37	24,8 (20,0-29,6)
Քլամիդիոզ						
	20	5,9 (2,9-8,9)	23	14,3 (9,7-18,8)	12	8,0 (5,2-10,8)
Սիֆիլիս						
	43	15,5 (9,8-21,2)	9	4,8 (2,5-7,1)	8	4,2 (2,8-5,7)

ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների գնահատման ցուցանիշը կազմել է Վանաձորում՝ 47%, Երևանում՝ 40%, Գյումրիում՝ 90%: Բոլոր երեք քաղաքներում ԿՍԿ-ների գերակշռող մեծամասնությունը մշտապես, ինչպես նաև վերջին սեռական հարաբերության ժամանակ օգտագործել է պահպանակ կոմերցիոն զուգընկերոջ հետ: Կանխարգելման ծառայություններում ԿՍԿ-ների ընդգրկվածության ցուցանիշը գտնվում է 68%-ից 87%-ի սահմաններում (գծապատկեր 15):

Գծապատկեր 15. ԿՍԿ-ների շրջանում վարքագծային հետազոտությունների արդյունքները, 2018թ.



**SUS-ների շրջանում ՄԻԱՎ վարակի տարածվածությունը
և վարքագծային ցուցանիշները**

SUS-ների շրջանում 2018թ. անցկացված ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտությունների արդյունքները ցույց են տվել, որ Երևանում ՄԻԱՎ վարակի տարածվածությունը կազմել է 2,7%, սիֆիլիսի տարածվածությունը՝ 0,5%, իսկ հեպատիտ Բ-ի տարածվածությունը՝ 0,3% (աղյուսակ 5): Գյումրիում ՄԻԱՎ վարակի տարածվածությունը կազմել է 1,3%, սիֆիլիսի տարածվածությունը՝ 0,4%, իսկ հեպատիտ Բ-ի տարածվածությունը՝ 0,2%: Վանաձորում ՄԻԱՎ վարակի տարածվածությունը կազմել է 0,3%, իսկ սիֆիլիսի և հեպատիտ Բ-ի որևէ դեպք հետազոտության ընթացքում չի արձանագրվել:


Աղյուսակ 5. *ՄԻԱՎ վարակի, սիֆիլիսի և հեպատիտ Բ-ի տարածվածությունը*

	Երևան N = 300		Գյումրի N = 150		Վանաձոր N = 150	
	N	%, (95% ՎՄ)	N	%, (95% ՎՄ)	N	%, (95% ՎՄ)
ՄԻԱՎ վարակ						
	9	2,7 (0,3-5,1)	2	1,3 (0,0-3,0)	1	0,3 (0,3-0,4)
Սիֆիլիս						
	2	0,5 (0,0-1,2)	1	0,4 (0,0-0,8)	0	--
Հեպատիտ Բ						
	2	0,3 (0,0-0,9)	1	0,2 (0,1-0,3)	0	--

ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների գնահատման ցուցանիշն ամենաբարձրն է եղել Վանաձորում՝ 51%, Գյումրիում կազմել է ընդամենը 41% և Երևանում՝ 48%: ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերում Երևանում ընդգրկված է եղել SUS-ների 68%-ը, Վանաձորում՝ 82%-ը, Գյումրիում՝ 87%-ը:

Երևանում SUS-ների 71%-ը, Վանաձորում՝ 58%-ը, իսկ Գյումրիում միայն 25%-ն է օգտագործել պահպանակ տղամարդու հետ վերջին անալ սեռական հարաբերության ժամանակ (զծապատկեր 16):

Գծապատկեր 16. *SUS-ների շրջանում վարքագծային հետազոտությունների արդյունքները, 2018թ.*



ՏԳ-ների շրջանում ՄԻԱՎ վարակի տարածվածությունը և վարքագծային ցուցանիշները

ՏԳ-ների շրջանում 2018թ. անցկացված ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտությունների արդյունքները ցույց են տվել, որ Երևանում ՄԻԱՎ վարակի տարածվածությունը կազմել է 2%, սիֆիլիսի տարածվածությունը՝ 1%: Հետազոտության ընթացքում հեպատիտ Բ-ի որևէ դեպք չի հայտնաբերվել (աղյուսակ 6):


Աղյուսակ 6. *ՄԻԱՎ վարակի, սիֆիլիսի և հեպատիտ Բ-ի տարածվածությունը*

	Երևան N = 90	
	N	%, (95% ՎՄ)
ՄԻԱՎ վարակ		
	2	2,0 (1,8-2,2)
Սիֆիլիս		
	1	1,0 (1,0-1,0)
Հեպատիտ Բ		
	0	--

ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների գնահատման ցուցանիշը կազմել է 70%: ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերում Երևանում ընդգրկված է եղել ՏԳ-ների 90%-ը:

Երևանում ՏԳ-ների 97%-ն է օգտագործել պահպանակ տղամարդու հետ վերջին անալ սեռական հարաբերության ժամանակ (գծապատկեր 17):

Գծապատկեր 17. ՏԳ-ների շրջանում վարքագծային հետազոտությունների արդյունքները, 2018թ.



Քաղաքաբնակ արական սեռի սեզոնային աշխատանքային միգրանտների շրջանում ՄԻԱՎ վարակի տարածվածությունը և վարքագծային ցուցանիշները

Քաղաքաբնակ արական սեռի սեզոնային աշխատանքային միգրանտների շրջանում 2018թ. անցկացված ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտությունների արդյունքները ցույց են տվել, որ ՄԻԱՎ վարակի (1,3%), հեպատիտ Բ-ի (0,5%) և սիֆիլիսի (0,7%) տարածվածությունն ամենաբարձրն է եղել Երևանում: Հեպատիտ Ց-ի տարածվածությունը բարձր է եղել և՛ Երևանում (3,4%), և՛ Վանաձորում (3,6%): Նշված խմբի շրջանում ՄԻԱՎ վարակի տարածվածությունը կազմել է 1,2%, հեպատիտ Բ-ի տարածվածությունը՝ 0,6%, հեպատիտ Ց-ի տարածվածությունը՝ 3,3%, և սիֆիլիսի տարածվածությունը՝ 0,5% (աղյուսակ 7):

Աղյուսակ 7. *ՄԻԱՎ-ի, հեպատիտ Բ-ի, հեպատիտ Ց-իև սիֆիլիսի տարածվածությունը, 2018թ.*

	ՀՀ		Երևան		Գյումրի		Վանաձոր	
	N = 900		N=300		N=300		N=300	
	n	% (95% ՎՄ)	n	% (95% ՎՄ)	n	% (95% ՎՄ)	n	% (95% ՎՄ)
ՄԻԱՎ վարակ								
	5	1,2 (0,4-3,5)	4	1,3 (0,0-2,7)	0	--	1	0,3 (0,0-0,8)
Հեպատիտ Բ								
	5	0,6 (0,1-2,9)	3	0,7 (0,0-1,6)	1	0,3 (0,05-2,4)	1	0,4 (0,0-1,1)
Հեպատիտ Ց								
	20	3,3 (1,5-7,1)	8	3,4 (0,8-6,0)	0	--	12	3,6 (1,2-6,1)
Սիֆիլիս								
	2	0,5 (0,1-3,3)	1	0,5 (0,0-1,6)	1	0,3 (0,05-2,4)	0	--

ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ քաղաքաբնակ միգրանտների գիտելիքների գնահատման ցուցանիշը կազմել է 39%: Գյումրիում քաղաքաբնակ միգրանտները ունեցել են գիտելիքների գնահատման ամենաբարձր ցուցանիշը (56%):

Քաղաքաբնակ միգրանտների 69%-ն ունեցել է սեռական հարաբերություն վերջին 30 օրվա ընթացքում (սկսած 67%-ից՝ Վանաձորում, մինչև 81%՝ Գյումրիում): Նրանցից միայն 32%-ն է օգտագործել պահպանակ:

Վերջին 30 օրվա ընթացքում սեռական հարաբերության ժամանակ պահպանակի օգտագործումը ամենացածրն է եղել Գյումրիի (17%), ամենաբարձրը՝ Վանաձորի միգրանտների շրջանում (43%), իսկ Երևանի միգրանտների շրջանում պահպանակի օգտագործումը կազմել է 36% (աղյուսակ 8):


Աղյուսակ 8. *Քաղաքաբնակ միգրանտների սեռական կյանքի բնութագրիչներ, 2018թ.*

	ՀՀ		Երևան		Գյումրի		Վանաձոր	
	N = 900		N=300		N=300		N=300	
	n	% (95% ՎՄ)	n	% (95% ՎՄ)	n	% (95% ՎՄ)	n	% (95% ՎՄ)
Երբևէ ունեցել է սեռական հարաբերություն								
Այո	891	99,8 (98,9-99,9)	292	99,8 (99,0-100)	300	100	300	100
Սեռական հարաբերություններ վերջին 30 օրվա ընթացքում								
Այո	671	69,2 (93,4-74,4)	221	67,4 (59,7-74,2)	242	81,4 (76,5-86,2)	208	63,0 (54,7-71,5)
Պահպանակի օգտագործումը սեռական վերջին հարաբերության ժամանակ վերջին 30 օրում								
Այո	206	31,6 (23,6-40,8)	76	36,4 (28,3-45,5)	35	17,1 (10,3-26,8)	95	43,2 (33,3-53,1)

ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների և SUS-ների շրջանում 2012, 2014, 2016 և 2018 թվականներին կենսաբանական և վարքագծային հիմնական ցուցանիշների փոփոխության միտումները


Թմրամիջոցների ներարկային օգտագործողներ

Պահպանակի օգտագործումը վերջին սեռական հարաբերության ժամանակ վերջին 30 օրվա ընթացքում




Նկատվում է վերջին ամսվա ընթացքում վերջին սեռական հարաբերության ժամանակ պահպանակի օգտագործման նշանակալի աճ՝ սկսած 2012թ. 36,8%-ից մինչև 40,9%՝ 2018թ. ($X^2=11,43$, $p=0,001$): Տարեկան միջին աճը կազմել է 0,7%:

ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունը և արդյունքների ստացումը վերջին 12 ամսվա ընթացքում




Վերջին տարվա ընթացքում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտված և հետազոտության արդյունքը ստացած ԹՆՕ-ների տոկոսը նշանակալիորեն նվազել է՝ 2012թ. 21,7%-ից հասնելով 13,7%-ի 2018թ. ($X^2=14,658$, $p=0,000$): Տարեկան միջին նվազումը կազմել է 1,3%:

ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների մակարդակը




ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների մակարդակը նշանակալիորեն փոխվել է 2012-2018թթ. ժամանակահատվածում ($X^2=10,78$, $p=0,001$): Տարեկան միջին նվազումը կազմել է 2,7%:

ՄԻԱՎ վարակի տարածվածությունը



ՄԻԱՎ վարակի տարածվածությունը ԹՆՕ-ների շրջանում էականորեն նվազել է՝ 2012թ. 7,6%-ից մինչև 2,2%՝ 2018թ. ($X^2=22,68$, $p=0,000$): Տարեկան միջին նվազումը կազմել է 0,9%:


Հեպատիտ Ց-ի տարածվածությունը



Հեպատիտ Ց-ի տարածվածությունը ԹՆՕ-ների շրջանում աճել է (ոչ նշանակալի) 2012թ. 51,2%-ից մինչև 66,7%՝ 2018թ. ($X^2=0,72$, $p=0,398$): Տարեկան միջին տոկոսային աճը կազմել է 2,6%:


Կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կանայք

Պահպանակի օգտագործումը վերջին հաճախորդի հետ վերջին 12 ամսվա ընթացքում




Նկատվում է վերջին տարվա ընթացքում հաճախորդի հետ վերջին սեռական հարաբերության ժամանակ պահպանակի օգտագործման նշանակալի աճ՝ 2012թ. 90,2%-ից մինչև 99,1%՝ 2018թ. ($X^2=43,03$, $p=0,000$): Տարեկան միջին աճը կազմել է 1,5%:

ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունը և արդյունքների ստացումը վերջին 12 ամսվա ընթացքում




Վերջին տարվա ընթացքում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտված և արդյունքները ստացած ԿՍԿ-ների տոկոսը նշանակալիորեն աճել է 2012թ. 37,4%-ից մինչև 42,9% 2018թ. ($\chi^2=7,956$, $p=0,000$): Տարեկան միջին աճը կազմել է 0,9%:

ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների մակարդակը




Նկատվել է ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների մակարդակի նշանակալի նվազում 2012թ. 64,2%-ից մինչև 40,0%՝ 2018թ. ($\chi^2=46,89$, $p=0,000$): Տարեկան միջին նվազումը կազմել է 4%:


Պահպանակների ստացումը ՀԿ-ից կամ աուբորիչ աշխատողներից վերջին 12 ամսվա ընթացքում




ՀԿ-ից կամ աուբորիչ աշխատողներից վերջին տարվա ընթացքում պահպանակներ ստացած ԿՍԿ-ների տոկոսը նշանակալիորեն աճել է 2012թ. 49,5%-ից մինչև 67,7%՝ 2018թ. ($\chi^2=66,49$, $p=0,000$): Տարեկան միջին աճը կազմել է 3%:



ՄԻԱՎ վարակի տարածվածությունը ԿՍԿ-ների շրջանում նվազել է (ոչ նշանակալի) 2012թ. 1,3%-ից մինչև 0,6%՝ 2018թ. ($\chi^2=2,653$, $p=0,103$): Տարեկան միջին նվազումը կազմել է 0,2%:




ԿՍԿ-ների շրջանում սիֆիլիսի տարածվածության նշանակալի փոփոխություն է նկատվել, 2012թ. 4,2%-ից մինչև 15,5%՝ 2018թ. ($\chi^2=15,97$, $p=0,000$): Տարեկան միջին աճը կազմել է 1,9%:



ԿՍԿ-ների շրջանում գոնորեայի տարածվածության նշանակալի փոփոխություն չի նկատվել, 2012թ.՝ 5,3%, 2018թ.՝ 6,7% ($\chi^2 = 1,31$, $p=0,253$): Տարեկան միջին նվազումը կազմել է 0,2%:


Տրիխոմոնիազի տարածվածությունը



ԿՍԿ-ների շրջանում տրիխոմոնիազի տարածվածության նշանակալի փոփոխություն չի նկատվել, 2012թ.՝ 22,6%, 2018թ.՝ 21,3% ($X^2=1,27$, $p=0,259$): Տարեկան միջին նվազումը կազմել է 0,2%:


Տղամարդու հետ սեռական հարաբերություն ունեցող տղամարդիկ

Պահպանակի օգտագործումը արական սեռ զուգընկերոջ հետ վերջին 12 ամսվա ընթացքում




Վերջին տարվա ընթացքում տղամարդ զուգընկերոջ հետ վերջին սեռական հարաբերության ժամանակ պահպանակի օգտագործումը նշանակալիորեն աճել է 2012թ. 57,9%-ից մինչև 78%՝ 2018թ. ($X^2=47,38$, $p=0,000$): Տարեկան միջին աճը կազմել է 3,4%:

ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունը և արդյունքների ստացումը վերջին 12 ամսվա ընթացքում




Վերջին տարվա ընթացքում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտված և արդյունքը ստացած ՍՍՏ-ների տոկոսի նշանակալի աճ է նկատվել՝ 2012թ. 38,8%-ից մինչև 41,5%՝ 2018թ. ($X^2=1,688$, $p=0,000$): Տարեկան միջին աճը կազմել է 0,4%:

ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների մակարդակը




ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների մակարդակը նշանակալիորեն չի փոխվել, 2012թ.՝ 55,6%, 2018թ.՝ 48,4% ($\chi^2 = 0.47$, $p=0.495$): Տարեկան միջին նվազումը կազմել է 1,2%:

Պահպանակների ստացումը ՀԿ-ից կամ աուբորիչ աշխատողներից վերջին 12 ամսվա ընթացքում




Նկատվել է ՀԿ-ից կամ աուբորիչ աշխատողից վերջին տարվա ընթացքում պահպանակ ստացած SUS-ների տոկոսի նշանակալի նվազում՝ 2012թ. 52,5%-ից մինչև 39,0%՝ 2018թ. ($\chi^2=18,33$, $p=0,000$): Տարեկան միջին նվազումը կազմել է 2,3%:

ՄԻԱՎ վարակի տարածվածությունը



SUS-ների շրջանում ՄԻԱՎ վարակի տարածվածության էական փոփոխություն չի նկատվել, 2012թ.՝ 2,5%, 2018թ.՝ 2,7% ($\chi^2=0,25$, $p=0,617$):

Հեթատիտ Բ-ի տարածվածությունը



SUS-ների շրջանում հեպատիտ Բ-ի տարածվածության էական փոփոխություն չի նկատվել, 2012թ.՝ 0,6%, 2018թ.՝ 0,3% ($\chi^2=0,63$, $p=0,427$): Տարեկան միջին նվազումը կազմել է 0,1%:

Խմբերի չափերի գնահատում

2018թ. իրականացվել է խմբերի չափերի գնահատում: Խմբերի չափերի հաշվարկման արդյունքում երկրի համար ստացվել են հետևյալ տվյալները՝ ԿՍԿ-ներ 4600 (իզական սեռի մեծահասակ բնակչության 0,37%), SUS-ներ՝ 16100 (արական սեռի մեծահասակ բնակչության 1,52%), արական սեռի ԹՆՕ-ներ՝ 8900 (արական սեռի մեծահասակ բնակչության 0,8%), իզական սեռի ԹՆՕ-ներ՝ 105 (0,01%): ՏԳ-ների խմբի ընդհանուր չափը գնահատման արդյունքում կազմել է 150 երկրի մակարդակով: Քաղաքաբնակ միգրանտների խմբի չափը Հայաստանում կազմել է 60 000:

ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների և SUS-ների շրջանում 2018 թվականին կենսաբանական և վարքագծային հիմնական ցուցանիշների միասնական տվյալներ

Երևանի, Գյումրիի և Վանաձորի ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների և SUS-ների համար հաշվարկված թվերը կշռվել են խմբերի չափով՝ հետազոտության յուրաքանչյուր խմբին համապատասխան որոշ ցուցանիշների հիման վրա երեք քաղաքների համար միասնական տվյալներ ստանալու նպատակով (աղյուսակ 9):

Աղյուսակ 9. ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների և SUS-ների շրջանում միասնական տվյալներ, 2018թ.

	ԹՆՕ	ԿՍԿ	SUS
	%	%	%
Վերջին սեռական հարաբերության ժամանակ պահպանակի օգտագործումը	41,4	99,1	69,7
Պահպանակների տրամադրում ՀԿ-ների կամ աուբորիչ աշխատողի կողմից վերջին 12 ամսվա ընթացքում	36,5	96,9	38,8
Վերջին 12 ամսվա ընթացքում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն և արդյունքների ստացում	14,9	49,1	89,9
ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների մակարդակ	40,6	40,6	48
ՄԻԱՎ վարակի տարածվածություն	1,9	0,6	1,9
Հեպատիտ Յ-ի տարածվածություն	66,1	--	--
Հեպատիտ Բ-ի տարածվածություն	--	--	0,3
Սիֆիլիսի տարածվածություն	2,4	15,3	0,5
Գոնորեայի տարածվածություն	--	5,4	--
Տրիխոմոնիազի տարածվածություն	--	21,3	--
Քլամիդիոզի տարածվածություն	--	6,0	--

**Դիսպանսերային հսկողություն, հակառետրովիրուսային բուժում,
մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում,
նախակոնտակտային և հետկոնտակտային կանխարգելում**

2018թ.վերջի դրությամբ դիսպանսերային հսկողության մեջ գտնվել է ՄԻԱՎ վարակով 2395 պացիենտ, որոնցից 35-ը՝ երեխաներ: 2018թ. ընթացքում ՄԻԱՎ վարակով 2079 պացիենտ այցելել է ՁԻԱՀ-ի ԿՀԿ և ստացել համապատասխան բուժօգնություն, նրանցից 32-ը եղել են երեխաներ: 2018թ. վերջի դրությամբ 1871 պացիենտ ստանում էր հակառետրովիրուսային (<ՌՎ) բուժում, որոնցից 29-ը՝ երեխաներ: 2018թ. ընթացքում մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում է ստացել ՄԻԱՎ վարակ ունեցող 46 հղի:

2018թ. հետկոնտակտային կանխարգելում տրամադրվել է ՄԻԱՎ-ով մասնագիտական և ոչ մասնագիտական վարակման վտանգի ենթարկված (ներառյալ դիսկորդանտ զույգերը) 28 մարդու: Նախակոնտակտային կանխարգելում տրամադրվել է 8 մարդու:

<ՌՎ բուժումն սկսելուց 12 ամիս հետո բուժման մեջ գտնվող մեծահասակների և երեխաների տոկոսը 2018թ. կազմել է 90,7%: Վերջին 5 տարվա ընթացքում ՄԻԱՎ վարակ ունեցողների գրեթե կեսը (49,6%) ախտորոշվել են ՄԻԱՎ վարակի ուշ փուլերում՝ ունենալով CD4+ լիմֆոցիտների 350 բջիջ/մմ³-ից ցածր մակարդակ (աղյուսակ 10):

Աղյուսակ 10. CD4+ լիմֆոցիտների քանակը ՄԻԱՎ վարակի ախտորոշման պահին, 2014-2018թթ.

CD4+լիմֆոցիտների մակարդակը	Պացիենտների %-ը 2014-2018թթ.
<200	34,3
200-349	15,3
350-499	15,4
>500	23,7
Անհայտ	11,3
Ընդամենը	100

Համակցված վարակներ

2018թ. արձանագրվել է տուբերկուլոզ/ՄԻԱՎ համակցված վարակի 73 դեպք (աղյուսակ 11):

Աղյուսակ 11. *Տուբերկուլոզ/ՄԻԱՎ համակցված վարակ, 2014-2018թթ.*

Տարեթիվ	Տուբերկուլոզ/ՄԻԱՎ համակցված վարակի արձանագրված դեպքերի թիվը
2014	86
2015	81
2016	64
2017	57
2018	73

2018թ. ընթացքում արձանագրվել են վիրուսային հեպատիտ Ց/ՄԻԱՎ համակցված վարակի 18 և վիրուսային հեպատիտ Բ/ՄԻԱՎ համակցված վարակի 10 դեպք (աղյուսակ 12):

Աղյուսակ 12. *Վիրուսային հեպատիտ Զ/ՄԻԱՎ և վիրուսային հեպատիտ Բ/ՄԻԱՎ համակցված վարակներ, 2014-2018թթ.*

Տարեթիվ	Վիրուսային հեպատիտ Ց/ՄԻԱՎ	Վիրուսային հեպատիտ Բ/ՄԻԱՎ	Վիրուսային հեպատիտ Ց/վիրուսային հեպատիտ Բ/ՄԻԱՎ
2014	44	7	1
2015	30	2	1
2016	39	6	-
2017	37	8	2
2018	18	10	1

Օփիոիդային փոխարինող բուժումը Հայաստանում

2018թ. վերջի դրությամբ մեթադոնային փոխարինող բուժում ստացողների թիվը կազմել է 568, որոնցից 167-ը՝ քրեակատարողական հիմնարկներում գտնվողներ: 501 մեթադոնային փոխարինող բուժում ստացողներից 26-ը եղել են ՄԻԱՎ վարակով պացիենտներ (աղյուսակ 13):


Աղյուսակ 13. *Օփիոիդային փոխարինող բուժումը Հայաստանում, 2014-2018թթ.*

Համակազմ	2014	2015	2016	2017	2018
Օփիոիդային փոխարինող բուժում ստացող ԹՆՕ-ների ընդհանուր թիվը	430	480	495	501	568
ՔԿՀ-ներում գտնվողներ	131	159	162	160	167
ՄԻԱՎ վարակ ունեցողներ	26	30	29	22	26

ՄԻԱՎ վարակի բուժման աստիճանասանդղակ (կասկադ), 2018թ.

2018թ. վերջի դրությամբ ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց հաշվարկային թիվը կազմել է 3500 (ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագրի «Սպեկտրում» համակարգչային ծրագրի տվյալ), որոնցից իրենց կարգավիճակի մասին իմացել են 2589-ը (74%): Նրանցից դիսպանսերային հսկողության վերցվել է 2395-ը (92%), վերջին մեկ տարվա ընթացքում ՁԻԱՀ-ի ԿԿԿ է այցելել և դիսպանսերային հսկողություն է անցել 2016-ը (84%), ՀՌՎ բուժում է ստացել 1871-ը (93%), չհայտնաբերվող վիրուսային ծանրաբեռնվածություն է ունեցել 1601-ը (բուժում ստացողների 86%-ը): «90-90-90» թիրախներին հասնելու տեսանկյունից Հայաստանը գտնվում էր «74-72-86» մակարդակի վրա (գծապատկեր 18):

Գծապատկեր 18. ՄԻԱՎ վարակի բուժման աստիճանասանդղակ, 2018թ.



ՄԻԱՎ-ի դեղակայունության հսկողություն

ՀՌՎ դեղերի նկատմամբ ՄԻԱՎ-ի առաջնային (փոխանցվող) դեղակայունության հայտնաբերման, ՀՀ-ում դեղակայունության մուտացիաների համաճարակաբանական հսկողության, երկրի տարածքում շրջանառվող ՄԻԱՎ-ի առավել տարածված ենթատիպերի որոշման նպատակով 2015թ. ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում ներդրվել է ՄԻԱՎ-ի դեղակայունության հսկողությունը:

Համաձայն ԱՀԿ-ի առաջարկությունների՝ ՄԻԱՎ-ի դեղակայունության հսկողությունը պետք է իրականացվի 3 հիմնական ուղղությամբ՝ ՀՌՎ դեղերի նկատմամբ ՄԻԱՎ-ի կայունության վաղ կանխման ցուցանիշների (աղյուսակ 14) վերլուծություն (աղյուսակ 15), առաջնային դեղակայունության տարածվածության վերլուծություն, առաջին շարքի դեղերով ՀՌՎ բուժում ստացող պացիենտների շրջանում ՄԻԱՎ-ի դեղակայունության տարածվածության վերլուծություն:

Աղյուսակ 14. ՀՌՎ դեղերի նկատմամբ ՄԻԱՎ-ի կայունության վաղ կանխման ցուցանիշներ (ՎԿՑ)

N	Ցուցանիշ	Թիրախային ցուցանիշներ ԱՀԿ*
1.	ՀՌՎ դեղերի ժամանակին ստացումը <i>Մինչ ՀՌՎ դեղերի սրացված նախորդ չափաբաժնի ավարտը դեղեր սրացած պացիենտների փոկոսը</i>	Կարմիր՝ < 80% Դեղին՝ 80 - 90% Կանաչ՝ > 90%
2.	ՀՌՎ բուժման անընդհատությունը <i>ՄԻԱՎ վարակով մեծահասակների և երեխաների փոկոսը, որոնք շարունակում են սրանալ ՀՌՎ բուժում այն սկսելուց 12 ամիս անց</i>	Կարմիր՝ < 75% Դեղին՝ 75 - 85% Կանաչ՝ > 85%
3.	ՀՌՎ դեղերի անխափան մատակարարումը <i>Տարվա (12 ամիսների) ընթացքում ՀՌՎ դեղերի մատակարարման ընդհատման (ամսվա ցանկացած օր) փոկոսը</i>	Կարմիր՝ >0% Կանաչ՝ 0%
4.	ՎԾ ճնշվածությունը <i>ՀՌՎ բուժում սրացող ՄԻԱՎ վարակով պացիենտների փոկոսը, որոնք ունեն ՎԾ չհայտնաբերվող մակարդակ բուժում սկսելուց 12 ամիս անց</i>	Կարմիր՝ < 70% Դեղին՝ 70 - 85% Կանաչ՝ > 85%
5.	Վիրուսային ծանրաբեռնվածության հետազոտություն <i>Տարվա (12 ամիսների) ընթացքում վիրուսային ծանրաբեռնվածության հետազոտություն</i>	Կարմիր՝ < 70% Կանաչ՝ ≥ 70%
6.	ՀՌՎ բուժման երկրորդ շարքի սխեմաներին ժամանակին անցումը <i>ՀՌՎ բուժման երկրորդ շարքի սխեմաներին անցած պացիենտների փոկոսը, որոնց մոտ չի դիտվել ՎԾ-ի նվազում 3 ամսվա ընթացքում</i>	Կարմիր՝ <100% Կանաչ՝ 100%

* Կարմիր՝ ցածր ցուցանիշ, թիրախայինից ցածր, դեղին՝ չափավոր, սակայն թիրախայինից ցածր ցուցանիշ, կանաչ՝ գերազանց ցուցանիշ, թիրախն իրականացված է:

Աղյուսակ 15. ՀՌՎ դեղերի նկատմամբ ՄԻԱՎ-ի կայունության վաղ կանխման ցուցանիշները մեծահասակների շրջանում, 2018թ.

ՎԿՑ մեծահասակների շրջանում		
ՎԿՑ 1	ՀՌՎ դեղերի ժամանակին ստացումը	Դեղին
ՎԿՑ 2	ՀՌՎ բուժման անընդհատությունը	Կանաչ
ՎԿՑ 3	ՀՌՎ դեղերի անխափան մատակարարումը	Կանաչ
ՎԿՑ 4	ՎԾ ճնշվածությունը	Կանաչ
ՎԿՑ 5	Վիրուսային ծանրաբեռնվածության հետազոտություն	Կանաչ
ՎԿՑ 6	ՀՌՎ բուժման երկրորդ շարքի սխեմաներին ժամանակին անցումը	Կարմիր

Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի բնագավառում 2018 թվականի առաջընթացի վերաբերյալ զեկույցի ցուցանիշներ

Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի բնագավառում 2018թ. առաջընթացի վերաբերյալ ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագրին ներկայացված զեկույցի ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 16-ում:

Աղյուսակ 16. *ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի գլոբալ մոնիտորինգի ցուցանիշներ, 2018թ.*

Ցուցանիշներ	Արժեք	Տարի
ՄԻԱՎ վարակով մեծահասակների և երեխաների տոկոսը, ովքեր շարունակում են ստանալ ՀՌՎ բուժում այն սկսելուց 12 ամիս անց	90,7%	2018
ՄԻԱՎ վարակով մեծահասակների և երեխաների տոկոսը, որոնց CD4+ լիմֆոցիտների քանակը ախտորոշման պահին եղել է <200բջ/մմ ³	38,7%	2018
Հակառետրովիրուսային դեղերի չընդհատվող մատակարարում	100%	2018
Մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում ստացածների տոկոսը	100%	2018
Տուբերկուլոզ/ՄԻԱՎ համակցված վարակով պացիենտների տոկոսը, որոնք ստացել են ՀՌՎ բուժում տուբերկուլոզի բուժման ընթացքում	74	2018
Հաշվետու տարվա ընթացքում դիսպանսերային հսկողության վերցված ՄԻԱՎ վարակով պացիենտների շրջանում ակտիվ տուբերկուլոզ ունեցողների տոկոսը	12,5%	2018
Հաշվետու տարվա ընթացքում դիսպանսերային հսկողության վերցված ՄԻԱՎ վարակով պացիենտների շրջանում լատենտ տուբերկուլոզի դեմ բուժում սկսածների տոկոսը	2,9%	2018
ՀՌՎ բուժում ստացող ՄԻԱՎ վարակով պացիենտների տոկոսը, որոնք հետազոտվել են հեպատիտ Բ-ի վերաբերյալ	88%	2018
ՄԻԱՎ վարակով մեծահասակների և երեխաների տոկոսը, որոնք ստանում են ՀՌՎ բուժում և միաժամանակ սկսել են ստանալ բուժում վիրուսային հեպատիտ Բ-ի դեմ հաշվետու տարվա ընթացքում	100%	2018
ՀՌՎ բուժում ստացող ՄԻԱՎ վարակով պացիենտների տոկոսը, որոնք հետազոտվել են հեպատիտ Ց-ի վերաբերյալ	5,9%	2018
ՄԻԱՎ վարակով մեծահասակների և երեխաների տոկոսը, որոնք ստանում են ՀՌՎ բուժում և միաժամանակ սկսել են ստանալ բուժում վիրուսային հեպատիտ Ց-ի դեմ հաշվետու տարվա ընթացքում	0%	2018

Մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման վերացման վավերացման ցուցանիշներ

Մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման վերացման (ՄԵՓՎ) վավերացման ցուցանիշները ներկայացված են աղյուսակներ 17 և 18-ում:

Աղյուսակ 17. ՄԻԱՎ-ի ՄԵՓՎ-ի վավերացման ցուցանիշներ, 2014-2018թթ.

Ազդեցության ցուցանիշներ						
Անվանում		2014	2015	2016	2017	2018
1.1	100 000 կենդանի ծնունդների հաշվով մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման նոր դեպքերի գործակիցը (ԱՀԿ թիրախ՝ ≤50)	2,3	2,3	4,9	0	0
1.2	Կրճքով չկերակրող ՄԻԱՎ վարակ ունեցող մայրերից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման ցուցանիշը (ԱՀԿ թիրախ՝ <2)	1,78	1,25	1,22	1,7	1,77
Գործընթացի ցուցանիշներ						
2.1	Անտենատալ խնամք ստացող հղի կանանց տոկոսը (առնվազն մեկ այց) (ԱՀԿ թիրախ՝ ≥95)	99,5%	99,6%	99,8%	99,8%	99,8%
2.2	ՄԻԱՎ-ի նկատմամբ իրենց կարգավիճակի մասին իմացող հղի կանանց տոկոսը (ԱՀԿ թիրախ՝ ≥95)	96,1%	98,1%	95,6%	>98%	>97%
2.3	ՀՌՎ բուժում ստացող ՄԻԱՎ վարակ ունեցող հղի կանանց տոկոսը (ԱՀԿ թիրախ՝ ≥90)	96,4%	96,7%	100%	100%	100%
Ծրագրային ցուցանիշներ						
3.3	Երեխաների շրջանում ՄԻԱՎ վարակի նոր դեպքերի թիվը	2	4	4	0	2
3.4	15-49 տարիքային խմբի կանանց շրջանում ՄԻԱՎ վարակի նոր դեպքերը	96	73	79	80	112
3.5	Մորից երեխային փոխանցումը նվազեցնելու համար ՀՌՎ դեղեր ստացած ՄԻԱՎ-ով ապրող հղի կանանց տոկոսը՝ ըստ ՀՌՎ բուժման սխեմաների	96,4%	96,7%	100%	100%	100%
3.6	Կյանքի առաջին 6 շաբաթների մորից երեխային փոխանցումը կանխարգելելու նպատակով ՀՌՎ բուժում ստացած ՄԻԱՎ վարակ ունեցող մայրերից ծնված նորածինների տոկոսը	96,6%	100%	100%	100%	100%

Ազդեցության ցուցանիշներ						
Անվանում		2014	2015	2016	2017	2018
3.7	Կրճքով կերակրման ընթացքում ՄԻԱՎ-ի փոխանցման հավանականությունը նվազեցնելու նպատակով ՀՌՎ դեղեր ստացած ՄԻԱՎ վարակ ունեցող մայրերից ծնված նորածինների տոկոսը	0%	0%	0%	0%	0%
3.8	Ծնվելուց հետո 2 ամսվա ընթացքում ՄԻԱՎ-ի վերաբերյալ ՊՇՌ մեթոդով հետազոտված ՄԻԱՎ վարակ ունեցող մայրերից ծնված նորածինների տոկոսը	79,3%	89,7%	94,7%	100%	100%
3.9	Ծնվելուց հետո 2 ամսվա ընթացքում կուտրիմոքսազոլով կանխարգելիչ բուժում սկսած ՄԻԱՎ վարակ ունեցող մայրերից ծնված նորածինների տոկոսը	34,5%	62,1%	84,2%	64%	83%
3.10	ՀՌՎ բուժումն սկսելուց 12 ամիս հետո այն շարունակող հղի կանանց տոկոսը	60%	83,3%	67,9%	87%	92%
3.13	Բժշկական հաստատություններին հասանելիությունը	Հասանելի են	Հասանելի են	Հասանելի են	Հասանելի են	Հասանելի են
3.13.1	Անտենատալ կլինիկական ծառայություններ տրամադրող բժշկական կազմակերպությունների թիվը	101	101	101	101	101
3.13.2	Երեխաներին ՀՌՎ բուժում տրամադրող բժշկական կազմակերպությունների թիվը	1	1	1	1	1
3.13.3	ՊՇՌ մեթոդով ՄԻԱՎ-ի վերաբերյալ նորածինների հետազոտություններ իրականացնող բժշկական կազմակերպությունների թիվը	1	1	1	1	1


Աղյուսակ 18. ՄԵՄՓԿ կասկադի ցուցանիշներ (ծրագրային տվյալներ, հաշվետվական ձևեր), 2013-2018թթ.

N	Անվանումը	2014	2015	2016	2017	2018
1.	Անտենատալ կլինիկաներում խնամքի վերցված հղիների թիվը	48849	47092	44643	41752	41453
2.	Անտենատալ խնամքի ծածկույթը	99,5%	99,6%	99,8%	99,8%	99,8%
3.	ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության ծածկույթը	96,1%	98,1%	95,6%	96,5%	97%
4.	ՄԻԱՎ վարակ ունեցող հղիների թիվը	26	16	22	19	27
5.	ՄԵՄՓԿ նպատակով ՀՌՎ բուժում ստացած հղիների թիվը	29	30	37	36	49
6.	ՄԻԱՎ վարակ ունեցող ծննդաբերած հղիների թիվը	27	29	37	33	46
7.	ՄԻԱՎ վարակ ունեցող մայրերից ծնված ՀՌՎ բուժում ստացած երեխաների թիվը	28	29	37	34	47
8.	ՀՌՎ բուժում ստացած ՄԻԱՎ վարակ ունեցող մայրերից ծնված ՄԻԱՎ վարակ ունեցող նորածիններ	0	0	0	0	0

ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն

ՄԻԱՎ վարակի վերջնական լաբորատոր ախտորոշում կատարվում է ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում, որտեղ գտնվում է երկրի միակ ռեֆերենս լաբորատորիան: ՄԻԱՎ-ի վերաբերյալ լաբորատոր հետազոտություններ իրականացվել են Երևան քաղաքի 36 և մարզերի 28 լաբորատորիաներում (գծապատկեր 19):

Գծապատկեր 19. ՄԻԱՎ-ի վերաբերյալ լաբորատոր հետազոտություններ բժշկական կազմակերպություններում



Ընդհանուր առմամբ 2018թ. բժշկական կազմակերպությունների՝ ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն իրականացնող լաբորատորիաներում կատարվել է ՄԻԱՎ-ի վերաբերյալ 149042 հետազոտություն (աղյուսակ 19 և 20):

Աղյուսակ 19. ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունները՝ ըստ լաբորատորիաների, 2018թ.

ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն իրականացնող լաբորատորիաներ	Տեղակայումը (քաղաք/մարզ)	Հետազոտությունների թիվը 2018
«ԶԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ	Երևան	51726
«Պրոֆ.Ռ. Օ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ	Երևան	11598
«Էրեբունի» բժշկական կենտրոնՓԲԸ	Երևան	416
«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿՓԲԸ	Երևան	2844
«Նորք-Մարաշ» բժշկական կենտրոնՓԲԸ	Երևան	5137
«Մոր և մանկան առողջության պահպանման ԳՀԿ» ՓԲԸ	Երևան	2348
«Նորք ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ	Երևան	638
«ՀՀ ոստիկանության բժշկական վարչության հոսպիտալ»	Երևան	39
«Երևանի կայազորային հոսպիտալ» պետական հիմնարկ	Երևան	543
«ՀՀ ՊՆ կենտրոնական կայազորային զինվորական հոսպիտալ»	Երևան	3761
«Դիագնոստիկաբժշկական միավորում» ԲԲԸ	Երևան	16
«Վիոլա» ՍՊԸ	Երևան	838
«Արմենիկում» ՓԲԸ	Երևան	17
«Նորմեդ» ՍՊԸ	Երևան	534
«Մաշկաբանության և սեռավարակաբանության բժշկագիտական կենտրոն» ՓԲԸ	Երևան	1842
«Արաբկիր» բժշկական համալիր, երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ ՍՊԸ	Երևան	349
«Դիաթար» ՍՊԸ	Երևան	50
«ՊՐՈՄ-ՏԵՍՏ» ՍՊԸ	Երևան	754
«ՀՀ ԱՆ հանրապետական նարկոլոգիական կենտրոն» ՓԲԸ	Երևան	503
«Բժշկական գենետիկայի և առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՍՊԸ	Երևան	525
«ՑԻՏՈ-ԼԱԲ» ՍՊԸ	Երևան	188
«Էկոսենս» ՍՊԸ	Երևան	248
«Մուրացան» համալսարանական կլինիկական հիվանդանոց	Երևան	4284
«Հերացի» թիվ 1 հիվանդանոցային համալիր	Երևան	5796
«Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն ՓԲԸ	Երևան	665
«Դավիդյանց լաբորատորիաներ»ՍՊԸ	Երևան	143
«Դիալաբ» կլինիկական ախտորոշիչ լաբորատորիա ՍՊԸ	Երևան	205
«Աստղիկ» բժշկական կենտրոն ՍՊԸ	Երևան	12057

ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն իրականացնող լաբորատորիաներ	Տեղակայումը (քաղաք/մարզ)	Հետազոտությունների թիվը 2018
«Սլավմեդ» բժշկական կենտրոն ՍՊԸ	Երևան	1765
«Վնասվածքաբանության և օրթոպեդիայի գիտական կենտրոն» ՓԲԸ	Երևան	463
«Թիվ 8 պոլիկլինիկա » ՓԲԸ	Երևան	26
«Մեդլայն Կլինիկ» բժշկական կենտրոն ՍՊԸ	Երևան	29
«Արմենիա» ԲԿ	Երևան	749
«Շենգավիթ» ԲԿ	Երևան	2811
«Արտաշիսյան» պոլիկլինիկա	Երևան	16
«Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲԸ	Երևան	363
«Գյումրու արյան փոխներարկման կայան» ՓԲԸ	Շիրակ	6732
«Մաշկավեներաբանության և կոսմետոլոգիայի կենտրոն» ՍՊԸ	Շիրակ	21
«Ախուրյանի մոր և մանկան առողջության կենտրոն» ՊՈԱԿ	Շիրակ	376
«Գյումրու Ն.Մելիքյանի անվան թիվ 2 պոլիկլինիկա» ՓԲԸ	Շիրակ	520
«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ	Շիրակ	878
«Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ	Շիրակ	185
«Գյումրու դիագնոստիկա» ԲԿ	Շիրակ	5
«Արմավիրի արյան փոխներարկման կայան» ՊՓԲԸ	Արմավիր	3934
«Զարիշատ Արամ Մարտինի Մկրչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ	Արմավիր	56
«Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ	Արարատ	3290
«Աշտարակի բժշկական կենտրոն» ՓԲԸ	Արագածոտն	1549
«Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ	Սյունիք	1618
«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	Սյունիք	522
«Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ	Սյունիք	85
«Եղեգնաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ	Վայոց ձոր	552
«Հրազդանի մարզային արյան բանկ» ՓԲԸ	Կոտայք	378
«ՀՀ ԱՆ տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ	Կոտայք	1499
«Լոռու մարզային արյանփոխներարկման կայան» ՓԲԸ	Լոռի	3471
«Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ	Լոռի	63
«Գուգարք կենտրոնական պոլիկլինիկա» ՓԲԸ	Լոռի	398
«Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	Լոռի	750
«Վանաձորի կայազորային հոսպիտալ» պետական հիմնարկ	Լոռի	217
«Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ	Գեղարքունիք	1384
«Մարտունու բժշկական կենտրոն» ՊՓԲԸ	Գեղարքունիք	1830
«Ճամբարակի առողջության կենտրոն» ՓԲԸ	Գեղարքունիք	108

ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն իրականացնող լաբորատորիաներ	Տեղակայումը (քաղաք/մարզ)	Հետազոտությունների թիվը 2018
«Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	Տավուշ	1287
«Նիկոլ Նասիբյանի անվան Նոյեմբերյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	Տավուշ	317
«Բերդի բժշկական կենտրոն» ՓԲԸ	Տավուշ	30
Ընդամենը		149042

Աղյուսակ 20. ՀՀ քաղաքացիների ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների և հետազոտված հղիների թիվը՝ ըստ մարզերի, 2018թ.

Տեղակայումը (մարզ)	Հետազոտությունների ընդհանուր թիվը	Հետազոտված հղիների թիվը
Երևան	114610	24263
Շիրակ	8681	5060
Լոռի	4899	3125
Արմավիր	3990	2741
Գեղարքունիք	3322	3018
Արարատ	3290	2666
Սյունիք	2223	1543
Կոտայք	3076	2030
Տավուշ	1636	1435
Արագածոտն	1549	1297
Վայոց ձոր	552	356
Ընդամենը	147828	47534

2018թ. իրականացված ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունները՝ ըստ բնակչության խմբերի և սեռի, ներկայացված են աղյուսակ 21-ում:

Աղյուսակ 21. ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունները՝ ըստ բնակչության խմբերի և սեռի, 2018թ.

Ծածկագիր		Հետազոտվածներ		
		Ընդամենը	այդ թվում	
			իգական	արական
Ա	Բ	1	2	3
100	Հետազոտված ՀՀ քաղաքացիներ Ընդամենը	144561	95541	49020
այդ թվում՝				
101	սեռական հարաբերություն ունեցածներ այդ թվում՝	548	304	244
101.1	ՄԻԱՎ վարակ ունեցողի կամ շճադրականի հետ	320	244	76
101.2	անհայտ կարգավիճակով անձի հետ	288	60	168
102	թմրամիջոցների ներարկային օգտագործողներ	1419	5	1414
103	հոմո և բիսեքսուալներ	1629	1	1628
104	սեռավարակներ ունեցողներ	428	383	45
105	կոմերցիոն սեռական ծառայություն տրամադրողներ	2150	2149	1
106	միգրանտներ	3610	233	3377
107	ՄԻԱՎ-ով մասնագիտական վարակման վտանգի ենթարկված անձինք	365	273	92
108	դոնորներ	16533	7330	9203
109	հղիներ	45671	45671	X
109.1	այդ թվում 15 – 24 տարեկան	14795	14795	X
109-Ա	հղիության ընթացքում երկրորդ անգամ հետազոտված հղիներ	1863	1863	X
109-Բ	հղիության ընդհատման համար դիմած կանայք	2153	2153	X
110	ռեցիպիենտներ	0	0	0
111	զինծառայողներ	1019	82	937
112	քրեակատարողական հիմնարկներում գտնվողներ	2583	103	2480
113	կլինիկական ցուցումներով հետազոտված մեծահասակներ, այդ թվում՝	43100	21418	21682
113.1	տուբերկուլոզով հիվանդներ	1455	357	1098
113.2	հեպատիտ Յ-ով հիվանդներ	120	34	86

Ծածկագիր		Հետազոտվածներ		
		Ընդամենը	այդ թվում	
			իզական	արական
Ա	Բ	1	2	3
113.3	հեպատիտ Բ-ով հիվանդներ	64	22	42
113.4	այլ կլինիկական ցուցումներով հետազոտված մեծահասակներ	41461	21005	20456
114	անանուն հետազոտվածներ	11452	8527	2925
115	ՄԻԱՎ վարակով հիվանդի կամ ՄԻԱՎ-ի նկատմամբ դրական անձի հետ ոչ մասնագիտական կոնտակտ ունեցածներ	92	50	42
116	հետազոտված երեխաներ, այդ թվում՝	3904	625	2279
116.1	ՄԻԱՎ վարակ ունեցող մայրերից ծնվածներ	222	97	125
116.2	կլինիկական ցուցումներով հետազոտվածներ	3682	1528	2154
117	այլ	6042	3371	2671
150	ՀՀ քաղաքացիների հետազոտությունների ընդհանուր քանակը	147828	97189	50639
200	Հետազոտված օտարերկրյա քաղաքացիներ Ընդամենը	1145	769	376
Այդ թվում՝				
201	սեռական հարաբերություն ունեցածներ այդ թվում՝	14	5	9
201.1	ՄԻԱՎ վարակ ունեցողի կամ շճադրականի հետ	8	5	3
201.2	անհայտ կարգավիճակով անձի հետ	6	0	6
202	թմրամիջոցների ներարկային օգտագործողներ	6	1	5
203	Հոմո և բիսեքսուալներ	3	0	3
204	սեռավարակներ ունեցողներ	0	0	0
205	կոմերցիոն սեռական ծառայություն տրամադրողներ	0	0	0
207	ՄԻԱՎ-ով մասնագիտական վարակման վտանգի ենթարկված անձինք	0	0	0
208	դոնորներ	1	0	1
209	հղիներ	32	32	X
209.1	այդ թվում 15 – 24 տարեկան	16	16	X

Ծածկագիր		Հետազոտվածներ		
		Ընդամենը	այդ թվում	
			իզական	արական
Ա	Բ	1	2	3
209-Ա	հղիության ընթացքում երկրորդ անգամ հետազոտված հղիներ	0	0	X
209-Բ	հղիության ընդհատման համար դիմած կանայք	1	1	X
210	ռեցիպիենտներ	0	0	0
211	զինծառայողներ	1	0	1
212	քրեակատարողական հիմնարկներում գտնվողներ	0	0	0
213	կլինիկական ցուցումներով հետազոտված մեծահասակներ, այդ թվում՝	803	611	192
213.1	տուբերկուլոզով հիվանդներ	20	8	12
213.2	հեպատիտ Ց-ով հիվանդներ	0	0	0
213.3	հեպատիտ Բ-ով հիվանդներ	0	0	0
213.4	այլ կլինիկական ցուցումներով հետազոտված մեծահասակներ	783	603	180
214	անանուն հետազոտվածներ	111	51	60
215	ՄԻԱՎ վարակով հիվանդի կամ ՄԻԱՎ-ի նկատմամբ դրական անձի հետ ոչ մասնագիտական կոնտակտ ունեցածներ	0	0	0
216	հետազոտված երեխաներ, այդ թվում՝	8	4	4
216.1	ՄԻԱՎ վարակ ունեցող մայրերից ծնվածներ	1	1	0
216.2	կլինիկական ցուցումներով հետազոտվածներ	7	3	4
217	այլ	165	64	101
250	օտարերկրյա քաղաքացիների հետազոտությունների ընդհանուր քանակը	1214	779	435
300	հետազոտվածների ընդհանուր թվաքանակը	145706	96310	49396
400	հետազոտությունների ընդհանուր քանակը	149042	97968	51074

ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտված ՀՀ քաղաքացիների բաշխումը՝ ըստ տարիքի, սեռիև բնակության վայրի, ներկայացված է աղյուսակ 22-ում:

Աղյուսակ 22. ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտված ՀՀ քաղաքացիների բաշխումը՝ ըստ տարիքի, սեռի և բնակության վայրի, 2018թ.

Տարիք	Ընդամենը	Այդ թվում՝ ըստ բնակության վայրի					
		Երևան		ՀՀ այլ քաղաքներ		ՀՀ գյուղեր	
		իգական	արական	իգական	արական	իգական	արական
Մինչև 15	4389	966	1363	609	876	238	337
15-24	28427	6732	5355	6657	1778	6751	1154
25-39	64841	22360	8721	15431	4263	11232	2804
40-49	16421	4715	4171	2215	1986	2134	1200
50 և բարձր	30483	6971	7103	3834	3971	4666	3938
Ընդամենը	144561	41744	26713	28776	12874	25021	9433

Վերջին տարիներին աճել են բուժաշխատողների նախաձեռնությամբ ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտության և խորհրդատվության ծավալները: Արդյունքում բարելավվել է ՄԻԱՎ վարակի հայտնաբերումը: Մասնավորապես, 2018թ. արձանագրված ՄԻԱՎ վարակի դեպքերի մեծամասնությունը՝ 71,8%-ը, ախտորոշվել է բուժաշխատողի նախաձեռնությամբ իրականացված ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության արդյունքում, 14,9%-ը վերադարձել է Հայաստան արդեն իսկ ՄԻԱՎ վարակ ախտորոշմամբ, 2,3%-ը հետազոտվել և ախտորոշում է ստացել միգրանտների շրջանում իրականացվող ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերի շրջանակում, 2,1%-ը՝ սեփական նախաձեռնությամբ ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության արդյունքում, 0,7%-ը՝ հանրային միջոցառումների շրջանակներում իրականացվող ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության արդյունքում, 2,6%-ը՝ կենսաբանական վարքագծային հետազոտության շրջանակում իրականացված ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության արդյունքում և 5,6%-ը ԹՆՕ-ների, ՏՍՏ-ների և ԿՍԿ-ների շրջանում ՀԿ-ների կողմից իրականացված աուֆրիչ աշխատանքների արդյունքում (աղյուսակ 23):

Աղյուսակ 23. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդարվության, հետազոտության տեսակը և ուղեգրումը, 2014-2018թթ.

ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվության, հետազոտության տեսակը և ուղեգրումը	2014		2015		2016		2017		2018	
	N	%	N	%	N	%	N	%	N	%
ԲԿ-ներում բուժաշխատողի նախաձեռնությամբ բացառությամբ նախաձեռնության կլինիկաները)	135	40,4%	136	46,3%	162	53,4%	187	52,2%	230	53,6%
Բուժաշխատողի նախաձեռնությամբ նախաձեռնության կլինիկաներում	24	7,2%	15	5,1%	19	6,3%	13	3,6%	16	3,7%
ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում բուժաշխատողի նախաձեռնությամբ (զուգընկերոջ, երեխայի, ծնողի հետազոտություն)	63	18,9 %	53	18,0 %	55	18,2%	47	13,1%	68	15,9%
ՔԿՀ-ում բուժաշխատողի նախաձեռնությամբ	5	1,5%	5	1,7%	3	1,0%	7	2,0%	5	1,2%
Արտերկրում հետազոտված և դրական արդյունք ստացած	75	22,5%	47	16,0%	42	13,9%	57	15,9%	64	14,9%
Այցելուի նախաձեռնությամբ	12	3,6%	13	4,4%	7	2,3%	11	3,1%	9	2,1%
Միգրանտների շրջանում իրականացվող ծրագրեր	19	5,7%	16	5,4%	6	2,0%	17	4,7%	10	2,3%
Հանրային միջոցառումներ	-	-	-	-	2	0,7%	1	0,3%	3	0,7%
Ինքնաթեստավորում	-	-	-	-	-	-	1	0,3%	-	-

Ընդամենը բուժաշխատողի նախաձեռնությամբ 74,4%

ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվության, հետազոտության տեսակը և ուղեգրումը	2014		2015		2016		2017		2018	
	N	%	N	%	N	%	N	%	N	%
SUS-ների շրջանում իրականացվող ծրագրեր	1	0,3%	5	1,7%	7	2,3%	9	2,5%	14	3,3%
ԿՍԿ-ների շրջանում իրականացվող ծրագրեր	0	0,0	4	1,4%	0	0,0	6	1,7%	6	1,4%
ԹՆՕ-ների շրջանում իրականացվող ծրագրեր	0,0	0,0	0	0,0	0	0,0	2	0,6%	1	0,2%
Ընդամենը	334	100%	294	100%	303	100%	358	100%	429	100%

Վերջին տարիներին գրեթե բոլոր հղի կանայք հետազոտվել են ՄԻԱՎ-ի վերաբերյալ: Հղիների շրջանում ՄԻԱՎ վարակի առավելագույն թվով դեպքերն արձանագրվել են 2018թ.՝ 27 դեպք (աղյուսակ 24): ՄԻԱՎ-ի նկատմամբ դրական այդ 27 հղիների զուգընկերների 52%-ը եղել են միգրանտներ, որոնք վարակվել են արտերկրում:

Աղյուսակ 24. Հղիների շրջանում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների և արձանագրված ՄԻԱՎ վարակի դեպքերի դինամիկան, 2014-2018թթ.

Տարեթիվ	ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտված հղիների ընդհանուր թիվը	Հղիների շրջանում արձանագրված ՄԻԱՎ վարակի դեպքերը
2014	46976	26 (57% միգրանտի զուգընկեր)
2015	46364	16 (50% միգրանտի զուգընկեր)
2016	42788	22 (50% միգրանտի զուգընկեր)
2017	44262	19 (42% միգրանտի զուգընկեր)
2018	47534	27 (52% միգրանտի զուգընկեր)

Միգրանտների շրջանում իրականացվող ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերի շրջանակում 2018թ. արագ թեստավորման մեթոդով կատարված ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների թիվը ներկայացված է աղյուսակ 25-ում:

Աղյուսակ 25. Միգրանտների շրջանում իրականացվող ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերի շրջանակում արագ թեստավորման մեթոդով կատարված հետազոտությունները, 2018թ.

Բնակչության խումբը	Հետազոտությունների թիվը
Միգրանտ	2910
Միգրանտի զուգրնկեր	5915
Համայնքի բնակիչ	1783
Ընդամենը	10608